ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք.Արտաշատ

N 380 -Ա

„04" հոկտեմբեր 2025թ.

«ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 02.10.2025 թվականի թիվ 01/30.3/2/8085-2025 գրությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

2025 թվականի սեպտեմբերի 01-ին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի /այսուհետ՝ Տեսչական մարմին/ աշխատակիցները հերթական վերահսկողական աշխատանքներ իրականացնելու ընթացքում նկատել են ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի աղբավայրի այրման հետևանքով առաջացած ծխի արտանետումներ: Դեպքի կապակցությամբ Տեսչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ:

«Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի /այսուհետ՝ Հիմնարկ/ տնօրեն Արամազդ Հակոբյանի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն Արարատ քաղաքի աղբավայրը շահագործվում է Հիմնարկի կողմից: Ա. Հակոբյանի կողմից ներկայացված մեկ այլ տեղեկանքի համաձայն 01.09.2025 թ. ժամը 13:00-ից 13:30-ի ժամանակահատվածում աղբավայրում նկատվել է հրդեհ, որը բռնկվել է կլիմայական բարձր ջերմաստիճանի պատճառով:

ՀՀ Արարատի մարզպետի /այսուհետ՝ Մարզպետ/ 07.10.2025 թ. թիվ 01//06425-2025 ծանուցագրով Հիմնարկի տնօրեն Ա. Հակոբյանը ծանուցվել է վարչական իրավախախտման

վերաբերյալ անձանագրություն կազմելու մասին և հրավիրվել է 16.10.2025 թ.ներկա գտնվելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մազմմանը:

Նշված օրը Ա. Հակոբյանը ներկայացել է մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժին, կազմվել է արձանագրություն:

Մարզպետի 16.10.2025 թ. թիվ 01//06617-2025 ծանուցագրով Ա. Հակոբյանին փոստային եղանակով ուղարկվել է ծանուցում՝ վարչական վարույթի շրջանակում հրավիրված վարչական լսմանը մասնակցելու վերաբերյալ, սակայն մինչև սույն որոշումն ընդունելու պահը ծանուցման փաստը չի հաստատվել:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 43.1-ին հոդվածի 10.60-րդ մասի՝ «Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով աղբավայրի հսկողություն, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումներ չիրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում աղբավայրը շահագործողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:

Համաձայն Օրենսգրքի 219₁-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ «Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի **43.1-ին հոդվածի** 1-ին, 1.1-ին, 2-րդ, 8.2-րդ, 9-րդ, 10.5-րդ և **10.6-րդ մասերով**, 152.1-ին հոդվածի 4-րդ մասով և 54.5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը»:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 38-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ»:

Համաձայն Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում,

բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Համաձայն Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ ենթակետի՝ «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը»:

Սույն գործի փաստերի համաձայն վարչական իրավախախտումը հայտնաբերվել /կատարվել/ է 01.09.2025 թվականին, ստացվում է, որ վարչական տույժ կարող էր նշանակվել մինչև 01.11.2025 թվականը ներառյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար (տե՛ս, Հուսիկ Մարգարյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով Օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի տնօրեն Արամազդ Հակոբյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ՀՀ Արարատի մարզպետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում, կամ դատական կարգով՝ Վարչական դատարան՝ երկուամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ ՎԻՎՕ-ի 283-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության

հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված)՝ որոշման մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ